77. ՏԱՆ ՏԻՐՈՋ ԲԱՆԻՆ ՁԵՆ ԽԱՌՆՎԻՐ

Կէղնի թագաւոր ու սադրազամ՝։ Դաւրեշի շորեր կհագնին, կէրթան ուրանց էրկրներ կօլըրդին։ Շատ կօլըրդին, քիչ կօլըրգին, մեկ օր կիգան սարի գլուխ հովիվի մը խոնախ կէղնին։ Իրկուն կէղնի, հովիվ կրերե օչխար մի կմորթե, օր ըդրանց իքրամ էնե։ Օչխար կմորթե, կքրդե, կղնե մեկ դիեն։ Կբերե օչխար մը լէ կմորթե։

Թագաւոր կըսե.—Ախպե՛ր, էդա մեկ օչխար մըզի շատ է, էդա մեկն էլ հ՚ո՞րի կմորթիս, բառադա մսարիֆ կենիս քըզի։

Հովիվ կշիտկի, աղեկ ճլոթ մա թագաւորին կզարկի, կըսե.—Տան տիրոջ գործին մը՛ խառնվի։

Թագաւոր միտք կդնե, կըսե. «Ախըր ես էդ ճլոթի հայիֆ քենե պըտի առնիմ»։

Էդ տեղ թագաւորին կկերցու, կխմցու, պառկին քնին, առավոտ կէլնին, էմլէ հաց կկերցու ու ճամփու կդնե։

Թագաւոր բարիմնաց կէղնի, կըսե.—Հովիվ ախպեր, եր օր օչխար կբերիս քաղաք ծախիս, հարցուր Մուրադի տուն. հ՚իգաս մըր տուն խոնախ էղնիս։

Կըսե.—Շատ աղեկ, եր էկա օչխար ծախի, կիգամ ձըր տուն խոնախ էղնիմ։

Եր կիգա օշխար ծախելու վախտ, հովիվ կառնե զօշխար, կը-տանե քաղաք կծախե։ Հ'իրկուն օր կէղնի, կհարցու. «Մուրադի տուն, Մուրադի տուն»,—կէրթա Մուրադի տուն, կտեսնա օր էրկու հոգի կանուկ դուռ, թըվընքներ ձեռքն ուրանց։

Կհարցու.—Մուրադի տուն իդա՞ է։

Ըսեցին.—Հա՛։

— Հըմալ է, գացեք ըսեք Մուրադին՝ հովիվ մի կուղե հ'իգա գինք տեսնա։

Գացին թագավորին ըսին։ Թագավոր ըսեց.—Գացեք զհովիվ առեք էկեք իդա տեխ։

Հովիվն էկավ, բարև տվեց։ Թագավոր բարևն առավ, նստե-ցուց։ Զհովիվ բարովեց-մարովեց, չիբուխ մի լեցուց հովվին, հո-վիվ չիբուխ քաշեց։ Կանչեց ուր աշչիներուն, ըսեց.—Հովիվն էկեր է, դաղրած է, անոթի է, մըզի շուտ կերակուլ հազըր էրեք, մեր սեղան լէ ծովու պռուկ դրեք, էն տեխ պըտի հաց ուտինք։

Կանչեց ուր դեմի մարդուն, ըսեց.—Գողտուկ աշչուն ըսեք՝ զաղեր թող օսկի ամաններու մեջ լեցու։

Հովվին ըսեց.—Հովի՛վ ախպեր, էլի էրթանք ծովու պռուկ, մըզի հաց ուտինք։

Առավ զհովիվ, գնացին ծովու պռուկ։ Գացին ընտեխ նստան։ Աշչին զաղեր հ'ըմեն օսկի ամաններով բերեց, դրեց սեղնի վրեն։ Թագավոր ուզեց փառըմ գինի, զէն լէ բերին դրին սեղնի վըրեն։ Բաշլամիշ էրեցին ուտել։ Քանիմ՝ լողմա կերան-չկերան, քանիմ՝ ստաքան գինի խմեցին-չխմեցին, թագավոր վերուց օսկի ամա-ններ մեկ-մեկ կթալե ծովու մեջ։ Էրկու-իրեք լողմա մեկէլ ամանից կուտե՝ զէն լէ կվերու, կթալի ծովու մեջ։ Շուշեք կվերու սեղնի վրայեն կշարդա։ Հովիվ ուրին հաց կուտա, կախեր է զուր գլուխ. ըսկի չխոսա։

Թագավոր հըմալ բաներ կընե օր թե հովիվ զրուցա՝ թագավոր զարկա ճլոթ մի, ուրին հայիֆ հանա լէ։ Հովիվ հիչ ձեն չհանիր, կուշտ կերավ ու քաշվավ, նստավ մեկ դիեն։

Թագավոր կտեսնա օր հովիվ չխոսա, ինչ օր ընե՝ ձեն չհանա, սեղան տվեց վերցնել։

Ըսավ.—Հովի՛վ ախպեր, ես մըկա գիտցա օր դու քու խոսքի տեր մարդ իս, ես էդ խըդար շուշա կոտրեցի, աման թալեցի, ասի՝ «Բալքի դու խոսաս, ես ճլոթ մը զարկիմ, իմ հայիֆն առնիմ», դու՝ չխոսացիր։

Հովիվ ըսեց.—Մուրա՛գ ախպեր, ես ի՞նչ հախ ունիմ խոսամ, իդա քու տունն է, կրակ կդնես կվառես, ինձի ի՞նչ, ես մսաֆեր մարդմ՝ իմ, էկեր իմ ու կէրթամ։

Թագավորն ըսեց.—Աֆարի՛մ, հովիվ։

Բերեց խլաթ մը հագեց հովիվին, բրդ մը լէ փարա տվեց ուրին, ըսեց.—Դէ՛, հովիվ, գնա, աստված քու բան աջողի։

Հովիվ էլավ գնաց ուր բանին։